IPS

Internationales Parlaments-Stipendium des Deutschen Bundestages

Deutscher Bundestag

Ցանկանո՞ւմ եք աշխատել Գերմանիայի խորհրդարանում

Նախապայմաններն են՝
- Հայաստանի քաղաքացիություն
- համալսարանական կրթություն
- գերմաներենի շատ լավ իմացություն
- գիտելիքներ Գերմանիայի քաղաքականության, հասարակության և պատմության վերաբերյալ
- կրթաթոշակի հատկացման պահին 30 տարեկանը լրացած չպետք է լինի

Կրթաթոշակ
- ամսական 500 եվրո
- բնակարանային ծախսեր
- ապահովագրական ծախսեր և ճանապարհածախս

Դիմումների ներկայացման վերջնաժամկետը՝ 30-ը հունիսի
- Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ սույն էջի հետադարձ կողմում, Գերմանիայի դեսպանությունում կամ համացանցային հետևյալ կայքից՝ www.bundestag.de/ips

Գերմանական Բունդեսթագը, համագործակցելով Բեռլինի Ազատ համալսարանի, Բեռլինի Հումբոլդտի համալսարանի և Բեռլինի Տեխնիկական համալսարանի հետ, հինգ ամսով հրավիրում է Բեռլին՝ մասնակցելու Միջազգային Խորհրդարանական Կրթաթոշակ (ՄԽԿ) ծրագրին:

Միջազգային խորհրդարանական կրթաթոշակը նախատեսված է բարձր որակավորում ունեցող և քաղաքականությամբ հետաքրքրվող երիտասարդ աղջիկների ու տղաների համար, ովքեր մտադիր են ծրագրի ավարտից հետո վերադառնալ հայրենիք և ակտիվորեն ու պատասխանատվության զգացումով մասնակցել նրա ժողովրդավարական ապագայի կերտմանը:

Գերմանական Բունդեսթագը՝ Գերմանիայի խորհրդարանը, երիտասարդներին հնարավորություն է ընձեռում՝ Բունդեսթագի անդամներից որևէ մեկի գրասենյակում, 15-շաբաթյա գործունեության ընթացքում ծանոթանալ գերմանական խորհրդարանական համակարգին և քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացին, ինչպես նաև փորձ ձեռք բերել խորհրդարանական աշխատանքի ասպարեզում:

Կրթաթոշակառուների ընտրությունը կատարում է Գերմանիայի Բունդեսթագի կողմից կազմված անկախ ընտրական հանձնաժողովը: